ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

ՇԱՐՔ 1 **ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**
(Առանձնատիպ)

СЕРИЯ 1 **АРМЕНОВЕДЕНИЕ**
(Отдельные оттиски)

VOLUME 1 **ARMENIAN STUDIES**
(Reprint)

№ 1

ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒԺԸ ԵՎ ՍԱՍԱՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վաղ միջնադարում յուրաքանչյուր պետության հզորության չափանիշը նրա ռազմական ուժն էր: Այս տեսակետից բացառություն չէին ո՛չ Սասանյան Պարսկաստանը, ո՛չ էլ Արշակունյաց Հայաստանը, որին պատմականորեն հաջորդեց Մարզպանական Հայաստանը: Արշակունիների՝ որպես թագավորական իշխանության վերացումից հետո մի շարք իրավունքների հետ մեկտեղ զորքի կառավարումը ևս անցավ նախարարների ձեռքը, և ինչպես Եղիշեն է վկայում, «..իբրև զնա (Արտաշիրին - Ռ. Հ.) ևս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն..., սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի»[1]: Այսպես Արշակունիների թագավորության վերացումից հետո՝ մարզպանության շրջանում, Հայոց այրուձին նախարարների ղեկավարությամբ ծառայության անցավ Պարսից արքունիքի իրավասության ներքո:

Դեռ Արշակունիների օրոք հայկական զորաբանակը բավականին ուժեղ էր, և այդ էր պատճառը, որ պարսկա-բյուզանդական պատերազմների ժամանակ կողմերից յուրաքանչյուրը ցանկանում էր Հայաստանին իր կողմը գրավել: Այս հարցը լուծվեց 387 թ. բաժանման հետևանքով, երբ Բյուզանդիան տնօրինեց իր տիրապետության տակ անցած հատվածի ռազմական ուժը, իսկ Պարսկաստանը՝ Մարզպանական Հայաստանի: Սկզբունքորեն այդ երկու պետությունների քաղաքականությունը քիչ էր տարբերվում միմյանցից: Նրանց ռազմավարության վառ արտահայտությունը Մավրիկիոս (Մորիկ) կայսեր հայտնի ձևակերպումն էր, որը տրված է Սեբեոսի «Պատմությունում». «Ազգ մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն: Բայց ե՛կ, ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ, և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել: Զի եթե մեռանին՝ թշնամիք մեռանին, և եթե սպանանեն՝ զթշնամիս սպանանեն և մեք կեցցուք խաղաղութեամբ»[2]: Թեև հայկական զինված ուժի մասին այս տեսակետը արտահայտում է Մորիկ կայսրը, բայց մինչ այդ էլ Պարսից արքունիքը Արշակունիների վերացումից անմիջապես հետո Հայոց այրուձին ուղարկում էր արևելք՝ պարսկական բանակի կազմում կռվելու քուշանների դեմ: Այս մասին Եղիշեի վկայությունները բազմիցս են, սակայն հիշատակենք միայն մեկը. «Եւ գունդս գունդս դարձեալ գումարէին ի նոցանէ յերկիր հեռաւոր՝ յամուրս անապատին՝ ի մարտ պատերազմի թշնամեացն արքայի, և բազմաց իսկ անդէն հասանէր վախճան մահու սրով» (Եղ., Բ):

[1] «Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Եր., 1957, Ա:
[2] «Պատմութիւն Սեբեոսի», Եր., 1979, ժե:

Մարզպանության ողջ ժամանակահատվածում հայ նախարարները և Հայոց այրուձին ծառայել են Պարսից բանակում, և դա տևական է եղել, որի համար հայ նախարարները և նրանց ընտանիքները ռոճիկ են ստացել Պարսից արքունիքից: Այս մասին Ղազար Փարպեցին հիշատակում է, որ «Արքայից արքայ (Պերոզը - Ռ. Հ.) զմահապարտութիւնն եթող ձեզ, և ի կապանացդ հրամայեաց արձակել, և կարգեաց ձեզ (հայ նախարարներին, որոնք աքսորում էին գտնվում Ավարայրի ճակատամարտից հետո - Ռ. Հ.) ռոճիկ ի Հրև և կանանց ձերոց՝ յաշխարհի իւրեանց»[3]:

Քուշանների դեմ կռվելու համար այրուձին Ապար աշխարհ էր մեկնում, այնտեղ հանդիպում պարսիկներին, որպեսզի միասին կռվեն թշնամու դեմ. «Մեք ի մտի եղաք անվրէպ խորհրդովք խաղալ գնալ յաշխարհն արևելից աստուածոցն օգնականութեամբ դարձուցանել ի մեզ զտէրութիւնն Քուշանաց. դուք իբրև զիրովարտակս զայս տեսանէք, անխափան վաղվաղակի այրուձի գումարեցեք առաջոյ քան զիս, յանդիման լինիջիք ինձ յԱպար աշխարհին» (Եղ., Ա):

Սակայն Պարսից արքունիքում ռազմական ծառայություն էր անում ոչ միայն Հայոց այրուձին, այլև Պարսից տիրապետության տակ գտնվող Աղվանքի և Վիրքի ռազմական ուժը, որն օգտագործվում էր հոների դեմ պայքարում. «Անդէն՝ ի ներքո Պահ դրանն արգելոյր զբազմութիւն այրուձիոյն Հայոց և զՎրաց և զԱղուանից...» (Եղ., Բ):

Հայոց այրուձին Պարսից բանակում օգտագործվել է ոչ միայն արտաքին հարձակումների ժամանակ, այլև ներքին ուժերում՝ երկրի ներսում ծագած խռովությունները ճնշելու համար: Այսպես՝ վրաց Վախթանգ թագավորի ապստամբության սկզբում Հայոց զորքի մի մասը գտնվում էր Աղվանքում և Զարմիհր Հազարավուխտի գլխավորությամբ կռվում էր ապստամբ բերդաբնակների դեմ: Այս մասին հիշատակում է Ղազար Փարպեցին՝ նշելով. «Զոր լուեալ Հայոց աշխարհիս մարդկան, յորոց բազումք այն ամ յԱղուանս էին, յապստամբ ամրականացն կռուի, որոց բովանդակին զօրագլուխ էր Զարմիհր Հազարավուխտ...» (Փարպ., ԿԶ):

Թեև Հայոց այրուձին օգտագործվում էր ներքին ուժերում, բայց Պարսից արքունիքը զգուշանում էր, որ հայերը կարող են միանալ ապստամբներին և համատեղ հանդես գալ պարսիկների դեմ, ուստի ապստամբությունների ժամանակ հայկական ուժերը հեռացնում էին ապստամբած վայրերից և տանում Պարսից արքունիք (տե՛ս Փարպ., ԿԶ):

Պետք է ասել, որ Հայոց այրուձին ոչ միշտ էր նվիրումով ծառայում Պարսից բանակում, օտար երկրների դեմ կռվում, որն արքունիքի դժգոհությունն էր առաջացնում (տե՛ս Փարպ., ԿԳ): Բայց նույն հայ զինվորն իր հայրենիքի պաշտպանության համար հերոսության ու անձնազոհության օրինակներ էր ցուցաբերում, ինչպես Ակոռիի (տե՛ս Փարպ., ԿԸ) կամ Մկնառինճի ճակատամարտերում, ուր հարյուր մարդ, թերևս մի քիչ պակաս, հազար կամ երկու հազար մարդու փախուստի մատնեցին (տե՛ս Փարպ., ՀԵ):

Հայկական այրուձին մարզպանության ողջ ընթացքում ծառայել է Պարսից զորաբանակում: Այս մասին տեղեկացնում են և՛ Եղիշեն, և՛ Ղա-

[3] «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1907, Կ:

զար Փարպեցին ու Սեբեոսը: Բացառություն են ապստամբությունների ժամանակահատվածները, երբ հայերը հրաժարվել են այրուձին ուղարկել Պարսից արքունիք: Սակայն ապստամբությունները ճնշելուց կամ համաձայնության գալուց անմիջապես հետո որպես ծառայության և հնազանդության նշան առաջին հերթին այրուձի էր ուղարկվում արքունիք: Այդպես եղավ Վարդանանց պատերազմից հետո, երբ գերության մեջ գտնվող հայ նախարարներն անցան ռազմական ծառայության (տե՛ս Եղ., է), իսկ Նիխորի հետ հաշտություն կնքելուց անմիջապես հետո Վահան Մամիկոնյանը այրուձի ուղարկեց արքունիք, քանի որ «Խնդրէր Նիխոր ի Վահանայ զբնիկ Հայոց այրուձին», «Կազմե՛ա, ասէ, փութով և արձակեա՛ ի դուռն...» (Փարպ., ՂԴ): Պարսից արքա Խոսրով Բ-ի օրոք հայ նախարարների՝ զորքով արքունիք մեկնելու մասին հիշատակում է Սեբեոսը, որը, անուն առ անուն հիշատակելով հայ նախարարներին, գրում է. «Եվ հասեալ նոցա յԱսորեստան ի տեղի արքունական տանն և հանդիման եղեն թագաւորին: Իսկ նա խնդութեամբ ընկալաւ զնոսա և երևելի շքեղութեամբ մեծացոյց պատուովք, և զմեծամեծ իշխանսն հրամայէ պահել ի դրանն արքունի, կարգել նոցա ռոճիկս յարքունուստ... Եւ զաւրաց նոցա հրաման տայր նստել ի Սպահան աշխարհի, և դարմանել զնոսա սիրով...» (Սեբ., ԻԱ):

Հայ նախարարներն ու նրանց զորքը մեծ սիրով և հատուկ արարողակարգով ընդունվում էին նաև մինչ այդ: Եղիշեի վկայությամբ, «...օրէնք էին յառաջ ժամանակաւ, յորժամ ի Հայոց այրուձի ի դուռն երթայր ի ձեռն պատուաւորի զորագլխի ուրուք, այր ընդ առաջ յղէր, և հարցանէր զողջոյն և զխաղաղութիւն Հայոց աշխարհին, և երկիցս և երիցս անգամ զնոյն առնէր, և զհանդէս գնդին ինքնին տեսանէր և յառաջ քան ի գործ պատերազմին հասանել, զզայն իսկ առ նա՝ մեծ շնորհակալութիւն համարէր և առաջի աթոռակցացն իւրոց և ամենայն մեծամեծացն՝ գովութիւն մատուցանէր ամենեցուն, և յիշէր զնախնեացն զվաստակս և զառն առն քաջութիւն պատմէր նոցա» (Եղ., Բ):

Արքունիք մեկնող այրուձին ողջ հայկական զորքը չէր: Մարզպանական Հայաստանը որպես վարչական միավոր ենթարկվել էր ներքին վարչական բաժանումների, որոնցից յուրաքանչյուրն առանձին ռազմավարչական միավոր էր և ուներ իր առանձին զորքը: Պատմական աղբյուրները վկայում են մի քանի այրուձիների գոյության մասին: Այսպես՝ Ղազար Փարպեցու՝ «Բայց զգոյշ լեր նախ ժողովել առ քեզ զայրուձին Ատրպատականի որ մոտ ի Հայս իցեն, և զայրուձին Հեր և Զարևանդ գաւառի...» (Փարպ., ՁԸ) տեղեկությունից իմանում ենք, որ գոյություն ուներ Հեր և Զարևանդ գավառի այրուձի, որը ներկայացնում էր Վասպուրական ռազմավարչական միավորը և համարվում էր երկրի Սեպհական գնդի կա՛մ ամբողջ այրուձին, կա՛մ նրա մի մասը: Եղիշեի՝ «...համագունդ ամենայն նախարարքն զօրոքն իւրեանց յիւրաքանչիւր տանէ ի մի վայր գային հասանէին վաղվաղակի. բազում և այլ այրուձի, որ յարքունի տանէ անտի էր» (Եղ., Գ) տեղեկությունից տեսնում ենք, որ եղել է նաև արքունական այրուձի, որը Արշակունիների թագավորական իշխանության վերացումից հետո պահպանվել է որպես նախկին «արքունի այրուձի»: Սա թերևս պետք է լիներ Արշակունիների նախկին թագավորական թիկնազորը, որի թիվը, կարծում ենք, հասնում էր երկու հազարի: Այս այրուձին պետք է կազմվեր նախկին

արքունական կալվածքների ոստանիկներից (մանր ազնվականներից), քանի որ Եղիշեի՝ «Գունդ կազմէր ի Հայոց Մեծաց զազատ և զազատորդի և յարքունի տանէ զոստանիկ մարդիկ...» (Եղ., Ա) հիշատակությամբ ոստանիկներն առանձին գունդ էին կազմում և զինվորական ծառայություն կատարում Պարսից արքունիքում:

Առանձին այրուձի ուներ նաև Սյունիքը, որը, ավելի ուշ դուրս գալով Հայոց մարզպանության կազմից, պարսկական զորքում ներկայանում էր առանձին այրուձիով: Այս է պատճառը, որ արաբների դեմ կռվում Պարսից զորքում հիշատակվում է. «Մուշեղ Մամիկոնեան որդի Դաւթի, զաւրավարն Հայոց երեք հազար սպառազինաւք և Գրիգոր իշխանն Սիւնեաց տերն՝ Ռ արամբ» (Սեբ., ԽԲ):

Ինչպես տեսնում ենք, մարզպանության շրջանում, երբ երկիրը բաժանված էր երեք վարչաքաղաքական միավորների, երեք մասի էր բաժանված նաև երկրի ռազմական ուժը, և այդ է պատճառը, որ 7-րդ դարում որպես առանձին ռազմական ուժեր հիշատակվում են Հեր և Զարևանդ գավառի այրուձին, Սյունյաց զորքը և Մամիկոնյանների ղեկավարությամբ առաջնորդվող զորքը, որը ներկայացնում էր Տանուտիրական գնդի երկիրը:

Մարզպանության ժամանակաշրջանում, բացի արքունիք ուղարկվող այրուձիից, Հայաստանում այլ զորքեր ևս գոյություն ունեին: Դրանք նախարարների զորքերն էին, որոնք նախարարական կալվածքներն էին պահպանում, իսկ պատերազմի դեպքում համալրում էին Հայոց զորաբանակը: Կային նաև ներքին զորքեր, որոնք տեղադրվում էին արքունի «ձմերոցներում», որոնք զորակայաններ էին, և դրանով պետք է բացատրել, որ Վասակ Սյունին ապստամբներին թուլացնելու համար առաջին հերթին դրանք է ավերում: Պատմիչի վկայությամբ՝ Վասակը «Յետս կացեալ յուխտէն քրիստոնեութեան և աւերեալ զբազում տեղիս Հայոց աշխարհին, մանաւանդ զձմերոցս արքունի, որ կայանք զորացն էին...» (Եղ., Գ), իսկ զորակայաններ էին Գառնին, Երամունը, մեծ դաստակերտ Դրասխանակերտը, Վարդանաշատը, Օշականը, Փառախոտը, Ձողակերտ ավանը, Արմավիրի բերդը, Կուաշը, Արուճն ու Աշնակը և այլն, որոնք ռազմավարական նշանակություն ունեին (տե՛ս Եղ., Գ):

Հայաստանում զորաբանակի մաս էին կազմում նաև բերդապահ զորքերը, որոնք բնակվում էին տեղերում և անհրաժեշտության դեպքում պաշտպանական կռիվներ մղում: Քանի որ Հայաստանը լեռնային երկիր էր և բնական ամրություններով հարուստ, ապա բերդերը մեծ դեր էին խաղում: Այսպես՝ Ավարայրի ճակատամարտից հետո, բաց դաշտում այլևս չկարողանալով պայքարել, հայկական ուժերն ամրացան ամրոցներում և հակապարսկական պայքար մղեցին, ինչպես Տմորիքի բերդերում ամրացած ապստամբած հայ զինվորները, իսկ Խաղտյաց լեռներում ապաստանածներն էլ հարձակվեցին Տայքի ձորագավառի վրա, ուր պարսկական զորքեր կային, և «արկին զզօրութիւն գնդին Պարսից, և կոտորեցին զբազումս ի նոցանէ...» (Եղ., Զ):

Այնքան մեծ էր այս ամրոցների մղած պայքարի դերը, որ Վասակ Սյունուց հետո մարզպան նշանակված Ատրորմիզդը, երկյուղ կրելով, «...զաշխարհն հրամայէր սիրով նուաճել», «քանզի բազումք ի նախարարացն Հայոց դեռևս բռնացեալ ունէին զամուրս աշխարհին...» (Եղ., Զ), որի

հետևանքով նոր մարզպանը «...թողուլ հրամայէր զհարկս աշխարհին, և զայրուձին ևս զարքունի թեթևացոյց առ ժամանակ մի» (Եղ., Զ):

Հայոց բերդերի և ամրոցների դերն այնքան մեծ էր, որ Պարսից արքունիքը հատկապես Բյուզանդիային սահմանակից հայկական ամրություններում պարսիկ բերդակալներ էր նշանակում, քանի որ վերջիններս ոչ միայն իշխում էին տեղերում, այլև հսկում էին պարսկա-բյուզանդական սահմանը: Այս մասին վկայում է Ղազար Փարպեցին՝ անուղղակիորեն նշելով, որ «...Շապհոյ տարեալ զկանայս Կամսարականացն յամուր բերդն Բասենոյ, զոր Բողբերդն կոչեն, անդ թողոյր, և արարեալ Յզգատ-Վշնասպայ բերդակալի զկանայս Կամսարականաց՝ պատուիրէր նմա բազում զգուշութեամբ պահել ըստ օրինացն քրիստոնէից զնոսա...» (Փարպ., Զ): Այսպես պարզ է դառնում, որ Բողբերդը, որն Արշակունիների օրոք Որդունի նախարարական տոհմի կալվածքն էր, իսկ նրանց բնաջնջումից հետո վերածվել էր արքունի կալվածքի, մարզպանության տարիներին իր ռազմավարական նշանակության համար դարձել էր Պարսից արքունիքի հսկողության ներքո գտնվող ամրություն:

Պարսկաստանի համար ռազմավարական նշանակություն ունէր նաև ամբողջ Մարզպանական Հայաստանը, և այդ է պատճառը, որ Դվինում նստող մարզպանները կոչվում էին սահմանակալներ. «Եւ այս են սահմանակալք տէրութեանն Պարսից յամս հաշտութեան այսորիկ ի Հայաստան երկրի և ի Դուին քաղաք: Վնդատական, Նիխորական...» (Սեբ., Լ):

Բացի վերը թվարկված զորատեսակներից՝ պետք է նշել նաև արքունի գործակալությունների զորքերի գոյության մասին, որոնք հիշատակվում են Ավարայրի ճակատամարտի նախօրեին՝ Վարդանի կողմնակից նախարարների թվարկումից հետո. «...և ամենայն գործակալքն արքունի իւրաքանչիւր զօրօքն հանդերձ» (Եղ., Ե): Այս զորատեսակը պետք է ապահովեր յուրաքանչյուր գործակալության գործունեությունը երկրում, սակայն պետության համար օրհասական պահերին նրանք ևս միանում էին ընդհանուր զորքին և պատնեշ կազմում թշնամու ճանապարհին, ինչպես եղավ Ավարայրի ճակատամարտի նախօրեին:

Տարբեր զորամիավորումներից բացի տարբեր էր նաև Հայոց զորաբանակի թիվը, որը, կախված իրավիճակներից, փոփոխվում էր: Մարզպանության ժամանակահատվածում զորքի ամենամեծ թիվը հիշատակվում է Ավարայրի ճակատամարտի մասին խոսելիս: Ըստ Եղիշեի՝ Վարդան Մամիկոնյանի զորքը 60 հազար էր (տե՛ս Եղ., Դ), իսկ մի այլ տեղեկությամբ Ավարայրի ճակատամարտի նախօրյակին Արտազ գավառում «... լինէր հանդես համարուն վաթսուն և վեց հազար այր ընդ հեծեալ և ընդ հետևակ» (Եղ., Ե): Թվական այս տարբերության խնդիրը, կարծում ենք, լուծվում է Ղազար Փարպեցու երկում, ուր հիշատակվում է, որ Ավարայրի դաշտում հիմնական զորքից բացի կար և «...այլ բազմութիւն զօրացն Հայոց, որք առ հարկի և ոչ կամաւ...» (Փարպ., ԼԹ) էին ներկայացել մարտի դաշտ: Կարծում ենք, հարկադրաբար մարտի դաշտ ներկայացածները կազմում էին 6 հազար մարդ, որոնք, միանալով 60 - հազարանոց զորքին, նրա թիվը մարտադաշտում հասցնում են 66 հազարի: Նման մարդկանց գոյությունը մարտադաշտում վկայում է նաև Եղիշեն, երբ նշում է, որ մարտի նախօրեին, շրջելով զորքի մեջ, Վարդանը զենք չունեցողներին զենք էր տալիս, հագուստ չունեցողներին՝ հագուստ: Թեև ամենամեծ հիշատակվող թիվը 66 հազարն է, բայց ողջ Հայոց զորքն ավելի մեծաթիվ պետք է լիներ, քանի որ բացի այս, զորք ունեին նաև Վասակ Սյունին ու նրա կողմնակից Ռշտունյաց, Խորխոռունյաց, Վահևունյաց, Բագրատունյաց և այլ տոհմերի նախարարները, որոնց զորքը համալրված էր պարսկական բանակում (Եղ., Դ):

Հայոց զորքը բաղկացած էր հետևակից և հեծելազորից, մի մասը սպառազեն էր, իսկ մյուսները՝ լոկ աղեղնավորներ և վահանավորներ (Եղ., Դ): Զորքը բաժանվում էր գնդերի, դրոշների (Եղ., Դ), ինչպես նաև վաշտերի[4]: Հայոց զորքը պաշտպանվում էր առաջապահներով, վերջնապահներով և կողմնապահներով, որոնք ապահովում էին զորքի անվնաս ու անվտանգ տեղաշարժը (տե՛ս Եղ., Գ): Եթե զորքի հիմքը հետևակն էր, ապա մարտունակ ուժը այրուձին էր: Հենց այս այրուձին էլ Պարսից արքունիքը վերցնում էր իր ծառայության ներքո: Բայց այրուձիի թվաքանակը ևս փոփոխական էր: Պատերազմի ժամանակ այն աճում էր, իսկ խաղաղ պայմաններում՝ նվազում: Պարսից արքունիքում ծառայող Հայոց այրուձիի թվաքանակը տարբեր է եղել: Ղազար Փարպեցու վկայությամբ Վահան Մամիկոնյանը Նիխորի խնդրանքով արքունիք է ուղարկում «զբնիկ Հայոց այրուձին» (Փարպ., ՂԴ), որը, մեր կարծիքով, պետք է ընդգրկեր երկու հազար հեծյալ: Սա պետք է լիներ Արշակունիների նախկին արքունի թիկնապահ զորքը: Երկու հազար թվաքանակի մասին վկայում է նաև Սեբեոսի հետևյալ տեղեկությունը, թե Պարսից արքա Խոսրով Բ-ի օրոք Սմբատ Բագրատունի Խոսրով Շումի գլխավորությամբ քուշանների դեմ կռվող հայկական զորքում հայ նախարարների և նրանց զորքի հետ մեկտեղ կռվում էր նաև «զաւրք նորա իբրև երկու հազար հեծեալ՝ յաշխարհէն» (Սեբ., ԻԸ): Կարծում ենք, որ «բնիկ այրուձին» նույն «յաշխարհէն» հավաքագրված այրուձին է: Երկու հազարը՝ որպես թիկնապահ զորքի թվաքանակ, հիշատակում է նաև Սեբեոսը, համաձայն որի Մուշեղ Մամիկոնյանը Վահրամի դեմ տարած պարսկա-բյուզանդական հաղթանակից հետո Պարսից արքա Խոսրով Բ-ին ներկայանալիս իր ղեկավարած 15 - հազարանոց զորքից ընտրում է երկու հազարը. «Եւ առնու (Մուշեղը - Ռ. Հ.) ընդ իւր արս երկու հազարս ի սպառազինաց՝ յազատաց և յանազատաց» (Սեբ., ԺԲ): Նկատենք, որ երկու հազար զորք է պահանջում նաև Մավրիկիոս (Մորիկ) կայսրը Հայաստանի բյուզանդական հատվածից. «Յայնմ ժամանակի դարձեալ հրաման ելանէր ի կայսերէն վերստին քննել և խնդրել յաշխարհէն Հայոց զայր և զձի արս ընտիրս սպառազէնս ԲՌ հեծելոց» (Սեբ., Ի):

Թեև Պարսից արքունիքում մշտական ծառայություն էր կատարում Հայոց երկուհազարանոց սպառազեն այրուձին, բայց Հայոց այրուձիի քանակը հասնում էր 15 հազարի: Սա Վահրամի դեմ պարսկա-բյուզանդական բանակում կռվող հայերի թիվն էր, որը միավորում էր նաև նախարարական գնդերը. «Եւ զզաւրս աշխարհին Հայոց ընդունէին գումարել, որք ի ժամուն առ ձեռն գտեալ. և անցեալք ի հանդիսի իբրև հազարք հնգետասանք, իւրաքանչիւր գունդք նախարարաց՝ ըստ հարիւրաւորաց, ըստ հազարաւորաց, ըստ գնդից, ըստ դրոշաց իւրեանց» (Սեբ., ԺԱ):

Հայաստանի՝ 15 հազար այրուձի ունենալու վկայությունն է նաև

[4] «Փավստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, 3-է:

Մովիայի հետ Թեադորոս Ռշտունու կնքած պայմանագիրը, ըստ որի՝ «Եւ հեծեալ կալէք յաշխարհիդ ժԵ հազար, և հաց յաշխարհէն տուք...» (Սեբ., ԽԸ): Պետք է նկատել, որ ինչպես հույներն ու պարսիկները, այնպես էլ արաբները շահագրգռված էին հայկական այրուձին սեփական նպատակներին ծառայեցնելու, քանի որ, ըստ պայմանագրի, Մովիան պահանջում է. «...զհեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ, բայց այլ ուր և հրամայեմ՝ պատրաստ լիցին ի գործ» (Սեբ., ԽԸ):

Թեև Հայոց այրուձին պարսիկներին ծառայելիս քաջություն էր ցուցաբերում, քանի որ «Եւ յայնմ պատերազմի ոչ փոքր ինչ քաջութիւն գործեալ հայակոյտ զաւրացն, զոր տեսեալ թագաւորն (Խոսրով Բ-ն - Ռ. Հ.)՝ առաւել զարմանայր» (Սեբ., ԻԲ), բայց Հայոց զորքը նաև վտանգ էր ներկայացնում Պարսից արքունիքի համար, մանավանդ երբ համախմբված էր լինում:

Հայ նախարարները երբեմն ապստամբում էին Պարսից արքունիքի դեմ և հրաժարվում կատարել իրենց ծառայությունները, այդ թվում՝ ռազմական: Նման դեպքերում արքունիքը փորձում էր հնազանդեցնել հայերին: Կախված երկրի ներքին և արտաքին քաղաքական իրավիճակից՝ նա կա՛մ հաշտության եզրեր էր փնտրում ապստամբների հետ, կա՛մ էլ փորձում էր զենքի միջոցով ճնշել նրանց: Այսպես՝ Վարդան Մամիկոնյանի գլխավորած ապստամբության ժամանակ այն ճնշելու համար արքունիքը զորք ու մարտական փղեր ուղարկեց, իսկ Ավարայրի ճակատամարտից հետո հանդուրժողական քաղաքականություն վարեց բերդերում ապաստանած նախարարներին կրկին իր կողմը գրավելու նպատակով: Նույն կերպ վարվեց արքունիքը նաև Վահան Մամիկոնյանի ղեկավարած ապստամբության ժամանակ: Սկզբում զորք ուղարկվեց Վահանի դեմ, սակայն հաջողության չհասնելով Հայաստանում, իսկ քուշանների դեմ պատերազմում պարտություն կրելով, որի ժամանակ զոհվեց նաև Պարսից արքա Պերոզը, Պարսից արքունիքը Վահանի հետ հարաբերությունները կարգավորելու և նրան կրկին ծառայության բերելու համար ընտրեց բանակցությունների ուղին: Նույնը չի կարելի ասել 571 թ. ապստամբության մասին: Այս դեպքում հայերին ճնշելու համար ոմն Վարդան Վշնասպից հետո, որն անկարող գտնվեց հաղթել հայերին, Պարսից արքունիքը Հայաստան ուղարկեց Գողոնն Միհրանին. «Ապա եկն Գողոնն Միհրան Ի հազարաւ զաւրաց սպառազինաց և փղաւք բազմաւք և ունէր նա ...հրաման արքայէն՝ զի անճետս արասցեն զարս ի յաշխարհէն Հայոց, խլել, բրել, յատակել և անխնայ յերկիր կործանել» (Սեբ., Թ):

Որքան ծանրանում էր Պարսից քաղաքականությունը, հուզումներն ու ապստամբություններն այնքան ավելի մեծ ծավալ էին ընդունում: Շատ դեպքերում հայերը ոչ միայն ապստամբում էին, այլև վերցնելով իրենց ռազմական ուժը՝ ծառայության էին անցնում բյուզանդական կայսեր մոտ: Այսպես վարվեցին քուշանների դեմ Սմբատ Բագրատունի Խոսրով Շումի գլխավորությամբ կռվող հայ նախարարները Սմբատ Բագրատունու մահից հետո: Նրանք «...ելեալ ընդ Պահակն Ճորայ զաւրաւք բազմութեան՝ գնացին յաւգնականութիւն թագաւորին Յունաց» (Սեբ., ԻԹ): Բայց քանի որ հայկական իրականության և զինված ուժերի նկատմամբ բյուզանդական քաղաքականությունը նման էր պարսից քաղաքականությանը, ապա հունաց բաժնի հայ նախարարներն էլ, երբ հրաման ստացան մեկնելու

Թրակիա, «...սկսան փախչել ի կողմանէն յայնմանէ և գալ ի ծառայութիւն Պարսից... Իսկ նա (Խոսրով Բ-ն - Ռ. Հ.) զամենեսեան ընդունէր մեծարանաւք և մեծամեծ պարգևս քան զկայսր պարգևէր նոցա, մանաւանդ իբր տեսանէր փախուստ նոցա ի կայսերէն՝ ևս առաւել մեծապէս սիրով կամէր զամենեսեան կորզել առ ինքն» (Սեբ., ԺԵ): Այսպես երկու երկրներն էլ ձգտում էին հնարավորինս առավելագույն զինված ուժեր ունենալ իրենց իշխանության ներքո, մինչդեռ հայ նախարարները ստեղծված իրավիճակից փրկություն էին որոնում կա՛մ Բյուզանդիայում, կա՛մ Պարսկաստանում, և այն չգտնելով, զինված պայքարի էին դիմում սեփական երկրում:

Բանալի բառեր – *մարզպանական Հայաստան, նախարարներ, ռազմական ուժ, բերդեր, այրուձի, հետևակ, զինատեսակներ, Պարսից արքունիք, քաղաքականություն, ապստամբություններ, ճակատամարտ, զորք, զինվորական ծառայություն, պայքար*

РУЗАННА АРУТЮНЯН – ***Военная сила марзпанской Армении и политика сасанидской Персии.*** – После падения царства Аршакидов возглавляемая нахарарами армянская конница служила в персидской армии. Сасанидский двор использовал армянский воинский контингент против не только внешних, но и внутренних врагов, в частности, для подавления восстаний. Персы высоко ценили армянскую конницу и оплачивали нахарарам их службу, но при этом остерегались их сплочённости. Чтобы не допустить её, страна была поделена на три военно-политические области, а воинская сила – на три соответствующие части; все крепости стратегического значения персы сохраняли под своим контролем. Случалось, армянские нахарары отказывались воевать в составе чужой армии вдали от родины, восставали и переходили на сторону Византии. Однако византийцы проводили по сути ту же политику, что и персы.

Ключевые слова – *марзпанская Армения, нахарары, политика, военная сила, крепости, конница, пехота, виды вооружений, персидский двор, политика, восстания, сражение, армия, воинская служба, борьба*

RUZANNA HARUTJUNYAN – ***The Military Force of Marzpanate Armenia and the Policy of Sasanian Persia.*** – After the fall of Armenian Arshakuni kingdom the Armenian cavalry began to serve in Persian armaments under the leadership of Armenian nakharars. The Armenian forces were used both against external enemies and against internal rebellions. The Persian Court esteemed the Armenian cavalry and paid the nakharars for their service. At the same time it was afraid of the unity of Armenian military forces. That's why Marzpanate Armenia and its military forces were divided into three parts by the Persian Court. During the Marzpanate all the Armenian fortresses which had strategic importance were under the authority of Persia.

The Armenian nakharars often refused to combat far from their country and mutinied against Sasanian Persia.

Key words – *Marzpanate Armenia, nakharars, military forces, fortresses, cavalry, infantry, Persian Court, policy, rebellions, mutiny, military forces, military service, struggle*